



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 28 » 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000135

Ձեռնարկողը՝

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ

Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, ՀԱԷԿ-ի տարածք

Գործունեությունը՝

Դավթաշեն վարչական շրջանի, Դավթաշենի 10-րդ փողոց հ.15/4 և հ.15/5 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը
քաղաք երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000135

«28» 12 2020թ.

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 10-րդ փողոց հ.15/4 և հ.15/5 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝

«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան

Ներածական մաս «ՀԱԷԿ շինարարություն» ՓԲ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 10-րդ փողոցի հ5/4 և հ 5/5 հասցեներում «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասերում) կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ 0.168111հա, և 0.350189հա մակերեսներով հողամասերում (ընդհանուրը 0,5183հա), նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի և խառը կառուցապատման: Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2020թ հոկտեմբերի 29-ի N01/18-07/2-85145-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս Հողատարածքը գտնվում է ազատ՝ չկառուցապատված հողերի հարևանությամբ, ռելիեֆային փոքր թեքությամբ: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն: Տարածքը ազատ է կառուցապատումից

Համաձայն նախնական գնահատման հայտի կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Դավթաշեն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

Կառուցապատման տարածքն գտնվում է Աղաբաբյան և Սասնա Շուկա փողոցների միմիանց կապող կառուցվելիք փողոցին հարող հողամասում: Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքը տեղակայված է Դավթաշենի կամրջի և Սասնա Շուկա փողոցի առանցքի վրա:



Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

հողատարածքի ընդհանուր մակերեսը – 5183քմ,

կառուցապատման մակերեսը –1394,5քմ,

կանաչապատման մակերեսը –2553.4քմ,

մայթեր, ճեմուղիներ , բացօթյա կայանատեղեր – 123501քմ,

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բնակելի համալիրը բաղկացած է բազմաբնակարան բնակելի երեք շենքերից՝ յուրաքանչյուրն իր ստորգետնյա ավտոկայանատեղիներով: «Ա» մասնաշենքը բնակելի է, «Բ» մասնաշենքը թեքամուտք է , «Գ»մասնաշենքը ծառայելու է որպես ինժեներական սպասարկման շինություն :

Նախատեսվող շենքը նախագծված է 4 ստորգետնյա հարկերով և 22 վերգետնյա հարկերով: Շենքի առավելագույն բարձրությունը 75,8մ է: Շենքի ստորգետնյա հարկերում նախատեսնված է ավտոկայանատեղ 126 ավտոմեքենայի համար: Մուտքը դեպի ստորգետնյա ավտոկայանատեղիները նախատեսնված է կլորաձև թեքամուտքով, որը նախագծված է որպես առանձին կառույց և անջատված է հիմնական շենքից համակցվաց կառույցով: Բոլոր մուտքերի բացվացքներում նախատեսնված են հակահրդեհային դարպասներ: «Ա» մասնաշենքի ստորգետնյա առաջին հարկում նախատեսնված են սենքեր որտեղ տեղավորվելու են էլեկտրական ենթակայանը և պոմպակայանը, ինչպես նաև երկու հատ 100խմ տարողությամբ ջրավազաններ:

Բնակելի մասնաշենքի առաջին հարկում նախատեսված է նախասրահ որը ունի մուտքեր դեպի գլխավոր ու բակային ճակատներից: Առաջին և երկրորդ հարկերում նախատեսնված են բնակիչների սպասարկման համար տարբեր հասարակական նշանակության սենքեր: Շենքի 3-ից մինչև 22-րդ հարկերում նախատեսնված են բնակարաններ որոնք խմբավորված են 2 մուտքային հանգույցների շուրջը:

Շենքը վերաբերվում է առաջին աստիճանի հրակայունության և հրդեհային անվտանգության Փ3.1 դասին: Դռների հրակայունության դասը 1-ին տիպի հակահրդեհային պատերում ընդունված է EI60: Ստորգետնյա ավտոհանգրվանը այլ նշանակության շենքերից անջատված է REI 150 հրակայունության սահմանով :

Թեքամուտքը անջատված է ավտոկայանատեղից հակահրդեհային EI60 դասի հրակայուն դարպասներով :

Ե/Բ միջհարկային ծածկերը նախատեսված են REI 60 դասի հրակայունության :

Ստորգետնյա հարկում նախատեսված է չժխացող աստիճանավանդակներ՝ դեպի դուրս անմիջական ելքելով: Աստիճանավանդակի մուտքը ավտոկայանատեղից իրականացվում է անցախուց-նախամուտքերով, օդի դիմհարով: Աստիճանավանդակների դռները նախատեսված են հակահրդեհային EI 30 հրակայուն սահմանով :

Բոլոր վերգետնյա հարկերը ապահովված են էվակուացիոն ելքերով՝ չժխացող աստիճանավանդակների միջոցով: Վերելակների հորանները դռները նույնպես նախատեսված են EI30 հակահրդեհային սահմանով :

Շենքը ունի հրշեջ մեքենաների մոտեցման հնարավորություն բոլոր ճակատներից: Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը կատարված է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող շինարարական, հակահրդեհային և սանիտարական նորմերին ու կանոններին համապատասխան :

Նախագիծը մշակնել է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան :

Հողամասերի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար :

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսված է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվում է երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն :



սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝ շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային (1100-1250կգ) և շինարարական աղբ (125մ³): Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ մոտակա աղբավայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հանվող գրունտի ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան(25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Այն իրականացվելու է տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքում տնկվելու են արծաթափայլ կամ կանաչ եղևնի, հուդայածառ, թխկի կարմրատերև, ձիակասկ սովորական, կեյլերթերիա հուրանավոր, ծորենի կամ կծոխուր, ասպիրակ վանհուտտի, պատնեշային թփեր հաշվի առնելով բուսականության համար բարենպաստ հողային տարածքները և այլն:

Համաձայն գնահատման հայտի տարածքում բուսահողի հզորությունը 10սմ է, ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է 1320մ³, ինչի օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Հողաբուսաշերտն օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով: Կանաչապատման համար նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց՝ կաթիլային ոռոգման հանգույցներով՝ ռետինե խողովակներով ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուրը կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,

- աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին տեխնիկապես սարքին վիճակում գտնվող մեխանիզմներով,

- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար,



- վտանգավոր արտահոսքերի դեպքում կլանիչ նյութերով անմիջապես մաքրում,
- մեքենաների և տեխնիկայի վնասումը շինհրապարակից դուրս, համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում
- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- շինհրապարակում շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է տարեկան 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 1050 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ազատ՝ չկառուցապատված հողերի հարևանությամբ, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների և պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել նորմալ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:



- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերի պահանջները:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 10-րդ փողոց հ.15/4 և հ.15/5 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ.մասնագետ՝



Յու. Մատինյան